

պապից, Հռոմի քահանայապետները թշնամական գիրք բռնեցին դէպի իտալական կառավարութիւնը, Այդ թշնամութեան հետեանքն այն էր, որ պապերն արգելեցին կաթոլիկներին մասնակցել քաղաքական կեանքին: Այս արգելքի շնորհիւ Իտալական ազգի մի ստուար մասը հեռու է պահում իրեն ազգային ընտրութիւններէց: Այս վիճակը ծանր է թուում նոյն իսկ Իտալիայի կառավարութեան և վերջին ժամանակներս Կրիսպին, Իտալական կառավարութեան գլուխը մի քանի զիջումներ արաւ եկեղեցուն, Սակայն զուր անցաւ այդ բարեկամութեան ջանքը, որովհետեւ Հռոմը սովոր չէ կէս միջոցներով դոհ լինել: պապը իւր մարտի Գ-ի ճառի մէջ այս խնդիրն ևս յիշեց, յայտնելով որ աշխարհական կառավարութեան արած քայլի շնորհիւ որով նա վիճակաւոր եպիսկոպոսների իրաւունքը ճանաչեց, շփոթութիւնը վերացաւ, սակայն դրանով չը փոխուեցաւ իւր վիճակը, որ անվայել է իւր կոչման ու պաշտօնին և որի հետ նա չէ կարող հաշտուել:

— Աերջապէս Կ-ը քիչ քիչ արժանացաւ հայ կաթոլիկների պատրիարք գերապայծառ Ազարեան եպիսկոպոսը, Լրագիրներն հաղորդում են, որ գեր-Ազարեանին պապը կարգինալների (ծիրանաւոր) շարքն է ընդունել և այդ առթիւ կոչել է նրան Հռոմում Հասունի դպիրներին հասաւ արդ և Ազարեանը, ցանկալի է, որ սա էլ Հասունի նման Հռոմում ծառայէր ի փառս պապին . . .

— Պապը ջերմ կերպիւ հետևում է եկեղեցիների միութեան խնդրին, Հռոմում ամենակարող յիսուսեանները դժգոհ են պապի արած զիջումներից, ուստի և պապն էլ մտադիր է մի նոր քարոզութեան դպրոց (Propaganda fides) հիմնել:

2. ԹՐԹՈՂՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ:

1. ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՊԱՍՏՆԱԳՐՈՒԹԻՒՆ:

Նորընտիր Անթիմոս Ե. պատրիարքը փետր-Յ-ին ժամանելով Վ. Պոլիս՝ մեծ հանգիստով ընդունուելուց յետոյ առաջին անգամ փետր. 19. պատարագ է մատուցել խուսն բազմութեան առաջ, Ժողովրդի համակրութիւնը շատ մեծ է, ամէնքն ևս յոյս ունին, որ նոր պատրիարքը կարող կը լինի իւր եկեղեցու շահերը արժանապէս պաշտպանել:

— Վ. Պոլսի հայոց և յուսաց պատրիարքները միմեանց փոխադարձ այցելութիւններ են արել և առանձին սիրոյ և համակրանքի նշաններ ցոյց տուել: Լրագիրների թղթակցութիւններից պարզ երևում է, որ այդպիսի սիրոյ ձգտումն այժմ կայ Պոլսում և ժողովրդի մէջ. յոյներն և հայերը սխուսմ են հաս-

կանալ, որ իրենց շահերն ընդհանուր են և ոչ զանազան:

ՆՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՍՏՆԱԳՐՈՒԹԻՒՆ:

Երուսաղէմի յուսաց պատրիարքի նախածեռնութեամբ այս տարի մի օրթողոքս եկեղեցի է բացուել Աւստրալիայում: Մայրուրն քաղաքում կային ցարդ բազմաթիւ յոյներ, ասորիք, ռուսներ, որոնք առանց եկեղեցու և հոգևոր էին, այժմ շնորհիւ ռուսական նախկին հիւպատոս Պոնտիատիի հիմնուեցաւ առաջին օրթողոքս եկեղեցին Աւստրալիայում:

Ն. Բ.



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

ՀԱՆՆԵՂՈՒԿՆԵՐ ՏՐԱՊԵՂՈՒՄԻ ԳԻՒՂԱՅՈՑ ՈՐԲԱՍՈՎ:

- Աշխարհի ժողովրդի համար կու
- Հասի սրբին զկարի համար. — Ճանաչար:
- Այլ մը կուզայ մոմաւի
- Գօտին հետը ընկնելու. — Ջր. դպի դասնալը:
- Այս մը ունիմ, ափ (եզը) շունի,
- Մէջի սորըը հոմարը. — Շունի. — Աստիք:
- Բարակ ծաղ մունիմ:
- Աշխարհը սիրունցնէ կու. — Աստիք:
- Դառնաւ կու, դառնաւ:
- Ջօնի դառնայ, քօնի կու. — Մաստր որոյ վերան բէլ կը փարաբեկ:

Դարակ, դարակ դաստարակ  
կէսը գոյծուած՝ կէսը գոյծուու. — Ջր. և մատեն:

Դար պատկին ՝ կծկեցուցի  
Էրկու մատցի ծովկեցուցի. — Քիթը մաքրել ի՞նչ էրով:

Նիս կեցում էս կէշտայ,  
Ըն ինձիկի մէնէ առաջ կեցում. — Շուք:

Ըն ինչինէ, էմն բօնի վայ տրուի կու. — Ահաւ:

Հողին դար, էնդն դար՝  
Մէջը ծղաղար (անաղար) — Ժողովրդի երկիւյ:

Շոտն ու երկու աղջիկ էինք,  
Մահէս զսյունեցօնք,  
Կենէ ելօնք շարունեցօնք. — Ստեփան:

Ըրկէն էրեց ՝)  
Ազունի ՝) ցոնք. — Կուսէի և Կէ ՝)

Թափէ Թափիէ է,  
Պահար կիսնէ է,  
Օչ էրկունց է,  
Օչ գետունց է,

Աշխարհու էրկուն է. — Արեգակ:

Ինքը Նիս զլօխը դուս. — Գամ:

1. Երայր: 2. Համբար. ճուռ: 3. Բողի, դիրանու: 4. Կող: 5. Գոստան: 6. Ահաւոց ետեի ոտեկն: 7. Կի՛վը կուսեայ ինձն, որ կը գտնե, ժաման կը պատրաստեն:

Լրացտրակ լրացտրակ՝  
 Զարի վաստակ՝  
 Զօնի թռչի,  
 Պինդ պինդ գողի. — Կարմ. 1)

Կապիմ կու կեշտայ,  
 Ացկերիմ 2) կու, կենայ կու. — Տրեխ.

Կարմիր եհզը յօրոր 3) գուհը 4) գնաց,  
 Պուը մեղքս մնաց. — Կերաս. Բաշ.

Կարմիր կով մը ունիմ, կու պոռչայ, 5) պոռչայ,  
 Գետնուց տանիվեր 6) բազուկի կեշտայ. — Յրմաս.

Կով մը ունիմ զոռը մըռըռ.  
 Կօտոշուլնին (եղջիւր) սըռըռ մըռըռ,  
 Կաթ կուտայ, տոն զաւ չի. — Լազոտ. 7)

Կով մը ունիմ, օնի օնի,  
 Կօտոշուլնին ծըրծրօնի. — Քարպիճեհ, միշտը եղ-  
 չիարատր.

Ե Ր Գ.

Ճաղիկ, ես քո ծառէն եմ՝  
 Վիճկի մէջէն թառէն եմ:  
 Բամին վեր քցեց  
 Վաթանս մտորեր եմ:  
 Այ օրան օրան ծաղիկ,  
 Կարմիր ու տօրան ծաղիկ,  
 Տարին մէ խետ ես գալըմ՝  
 Գամ՝ քեզի գովամ՝ ծաղիկ:  
 Ճաղիկ ծաղկավանայ եմ՝  
 Ասըլ Երեւանայ եմ՝  
 Տարին մէ խետ էս գալըմ՝  
 Թազայ նուպարխանայ ես:

Ա Ղ Օ Թ Զ Ե Ն Ե Ր.

Ա.

Էկան երեք ձիաոր  
 Մէկն էր Յիսուս՝ մէկ քրիստոս.  
 Մէկ Կնճանաց Աստուածածին,  
 Էլան սարով,  
 Շըջան ձորով,  
 Բառսունըխինգ խաչալամով:  
 Խարցուցի. իմ՝ Տէր, դ՞ո՞ր կ'երթայ քարով.  
 — Կերթամ՝ դուռն խինդին,  
 Կ'եննիմ՝ էրդիս տղացկանին,  
 Բանլիս թալիմ՝ ըտըր քարծին,  
 Չվախենայ սիրտն ի փորին.  
 Չուր ի գալոց քրիստոսին:

Բ.

Աստուածածնի մատով,  
 Լուսաւորչի խաչով՝  
 Արտ ա սաներ (ցաններ),  
 Ափն ա ըուանր,  
 Մեր տէրն ա էկեր, զարմացեր,  
 Ասեր — չիք ես չքանաս,  
 Ապառաժ քարեր ըուսանաս.\*

Գ.

Խող ես խալիք,  
 Խօլ ես թոհր,  
 Աստուածածնայ ձկութն ինէ: 1

Ս. ԼԱՅԿՈՒՆԻ.



ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՄԵՐ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՏԱՂԱ. ՉԱՓՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

(Յ. խան Մասէճեանի « Լամէլտի » Պարզմանութեան առթիւ.)

« Արարտի » անցեալ համարում խօսելով « Լամէլտի » հայերէն նոր թարգմանութեան մասին՝ մեր յօդուածը մենք վերջացրինք նորանով, որ ասացինք թէ Յ. խան Մասէճեանի ընտրած տաղաչափութիւնն արժանի է ուշագրութեան և խոստացանք այդ մասին էլ մի երկու խօսք ասել:

Մեր նորագոյն գրականութեան մէջ ընդունուած տաղաչափական ձևերը ինքն ըստ ինքեան մինչ այն աստիճան անկերպարան են և օրէնքները մինչ այս աստիճան անմշակ ու խառնաշփոթ, որ մեր յատկապէս ուսաստացոցս նոյն իսկ լաւագոյն բանաստեղծները մեզ երևում են որպէս արհամարհող բանաստեղծութեան այն անհրաժեշտ պայմաններից մէկի, որ է գեղարուեստական արտայայտութեան արտաքին ձևը, չափը, Մեր հին բանաստեղծները, զոր օրինակ Շնորհալին, զարմանալի խոստապահանջ են այդ կողմից և ամենայն կանոնաորութեամբ հետևում են որոշ օրէնքների, ճշմարիտ է, մեր շարականներն իրօք գեո օրինաւոր կերպով ուսումնասիրուած չեն տաղաչափութեան տեսակէտից, և հ. Ա. Բագրատունու « Լայկական » չափով մեր բոլոր շարականների կազմութիւնը բացատրուել չէ կարող, թէպէտ և նորանից շատերն այն հիմքն ու-

\* Ապառաժ Զարեռու վերայ փոխադրուած է այդ վերջին քրիստոսի հրաշքը, որ կայ այժմ՝ քարաքոս անուամբ նման ան վերջին, որ մէրէթից կը կոչուի: Այս աղօթքիս անունը է « մէրէթից վերջի » աղօթքը:  
 1 Այս խօսքերն ասում են ցաւած աչքն կրեք անգամ տրորելով:

1. Մեծ մատարի եման վերան ճախարակով քել կը փարարեն,  
 2. Կապուած էի, կով, եզ արմակից կամ քելի եւ շուանի ծայրերն որ միմեանց կապուած են արմակից, 3. Երբ, 4. Գոմ, 5. Բառալի, 6. Վեր կը հլանակի վեր, 7. Սիմիցոր որը հաց կը չիենե,